ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՏԴ 338.48
DOI 10.56246/18294480-2022.12-18

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԻՆԱ
ՀԱԱՀ դասախոս
էլփոստ՝ ninavardanyan@mail.ru
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀԱԱՀ և ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ hkhachatr@mail.ru

Ագրոտուրիզմը «վայր» է, որտեղ գյուղատնտեսությունը «հանդիպում» է զբոսաշրջությանը՝ տրամադրելով հիանալի փորձ՝ ֆերմայում շրջագայության, փառատոների, պանրի պատրաստման մաստեր կլասների տեսքով: Այն գյուղական վայրերում տնտեսական փորձի և գյուղական ձեռներեցության դիվերսիֆիկացման արժեքավոր մոդել է, որը նպաստում է մշակութային լանդշաֆտների պահպանմանը և Հայաստանում գյուղատնտեսական գործունեության նոր մոդելի ձևավորմանը: Ագրոտուրիզմը մեծ նշանակություն ունի գյուղի տնտեսական զարգացման համար և առանց բնական ռեսուրսների կամ սոցիալական և համայնքային արժեքների վրա մեծ ճնշում գործադրելու՝ թույլ է տալիս տեղացիներին և այցելուներին դրական մթնոլորտում կիսվել ստեղծված ընդհանուր փորձով: Ուսումնասիրության նպատակն է պարզել Հայաստանում ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները: Ելնելով ուսումնասիրություններից և միջազգային փորձից՝ առաջարկվում է ագրոտուրիզմի երկու մոդել՝ քիչ կապիտալ ներդրումներով: Առաջին մոդելի դեպքում զբոսաշրջիկները գիշերում են գյուղացու տանը, որտեղ մասնակցում են գյուղատնտեսական տարբեր աշխատանքների: Մյուս դեպքում առաջարկվում է ստեղծել ագրոտուրիստական համալիր, որը կներառի ագրոտուրիզմի զարգացմանը նպաստող բոլոր ռեսուրսները՝ հյուրատներ, էթնոմշակութային կենտրոններ, էկոլոգիապես բարենպաստ պայմաններ և այլն: Արդյունքում գյուղական տուրիզմի զարգացումը կբերի մարզերի

համաչափ զարգացման, գյուղացին կունենա լրացուցիչ եկամուտ, կնվազի գործազրկությունը, կզարգանան գյուղի սոցիալական ենթակառուցվածքները և այլն:

Բանալի բառեր՝ *ագրոտուրիզմ, մթերքի արտադրություն, զբոսաշրջիկներ, գյուղական բնակավայր, ձկնորսություն, բերքահավաք, ձիավարություն, գյուղական առօրյա:*

Հայաստանը ագրարային երկիր է, և ագրոտուրիզմը համարվում է Հայաստանում զբոսաշրջության զարգացման ամենահեռանկարային ճյուղերից մեկը: Զբոսաշրջության գրեթե բոլոր ձևերն էլ զարգանում են, արկածայինը, էքստրեմալը, սակայն ագրոտուրիզմը բացի իր գրավչությունից նաև մատչելի է, ինչն ավելի է մեծացնում զբոսաշրջային այցելությունների հավանականությունը: Վերջին տարիներին զբոսաշրջային ոլորտում ենթակառուցվածքների զարգացումը, մարզերում հյուրանոցային տնտեսությունների կառուցումն ու վերագործարկումը, ավտոմայրուղիների բարեկարգումն ու նորերի կառուցումը, ճոպանուղիների գործարկումը մեծ նախադրյալներ ստեղծեցին Հայաստանը որպես զբոսաշրջային լավագույն երկիր դիտարկվելու տեսանկյունից: Զբոսաշրջիկներից շատերը, այցելելով պատմամշակութային վայրեր, ցանկություն են հայտնում շրջել նաև Հայաստանի գյուղական համայնքերով:

Ագրոտուրիզմը ենթադրում է զբոսաշրջիկների համար բոլոր հնարավոր ժամանցային ձևերը գյուղական վայրերում, այսինքն՝ հանգստի հետ միաժամանակ զբոսաշրջիկներին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալ և մասնակցել այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են բերքահավաքը, հողագործությունը, անասնաբուծությունը, ձիավարությունը, ազգային տոներն ու ծիսակատարությունները, գինեգործությունը, ազգային կերակուրների պատրաստումը, ձկնորսությունը և այլն: Զբոսաշրջային հանրաճանաչ վայրերից զատ՝ հայկական գյուղերը կատարյալ վայր են՝ իրական հայկական գյուղական կյանքին ծանոթանալու համար: Հայ գյուղացու առօրյան տարբեվում է, այն շատ հագեցած է և ագրոտուրիզմի միջոցով մենք էլ կարող ենք այդ կյանքի մաս դառնալ, մասնակցել թոնրի վրա լավաշ թխելու հետաքրքիր արարողությանը, կովերին կթել ու կաթից պատրաստել կաթնաշոռ, պանիր, կարագ և այլ տարբեր կաթնամթերքներ, մասնակցել բերքահավա-

քի եռուն աշխատանքներին և այլն: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայկական շատ գյուղեր ունեն դարավոր պատմություն և հիմնվել են ավելի վաղ, քան եվրոպական շատ քաղաքներ, ինչ խոսք, այս հանգամանքը ավելի է բարձրացնում հայկական գյուղերի գրավչությունը: Համավարակի պայմաններում, երբ սահմանները փակվեցին, ներքին զբոսաշրջությունը դինամիկ աճ գրանցեց, հայկական գյուղը սկսեց գրավել նաև քաղաքում ապրող հայաստանցիներին, իսկ 2020թ.-ի անկումը պայմանավորված էր 44-օրյա պատերազմով: Հատկանշական է, որ այցելությունների 64-77 տոկոսը հանգստի ու ժամանցի նպատակով է եղել՝ գծապատկեր 1:



Գծապատկեր 1. ՀՀ ներքին զբոսաշրջության դինամիկան

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, մինչև պատերազմն ու համավարակը Հայաստանի՝ առավել շատ այցելուներ ունեցող վայրը Երևանն էր. այցելուների մոտ 44,1%-ը առնվազն որոշակի ժամանակ անցկացրել է Երևանում: Մյուս մարզերի համեմատ այցելությունները բարձր են Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերում՝ 7,5-8,5 տոկոսի սահմաններում: Զբոսաշրջիկների այցելությունների ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արագածոտնի մարզի և ԼՂՀ-ի համար՝ համապատասխանաբար 2.8% և 1.4%: 2020 թվականին պատկերը այլ է, որը պայմանավորված է եղել հիմնականում երկրում տիրող արտակարգ իրավիճակով՝ աղյուսակ 2:

Աղյուսակ 1.

Զբոսաշրջիկների այցելությունները ըստ վարչական շրջաններ և ԼՂՀ մինչև համավարակը և 44 օրյա պատերազմը, %:

	Երևան	Արագածոտն	Արմավիր	Գեղարքունիք	Կոտայք	Լոռի	Շիրակ	Տավուշ	Վայոց Ձոր	Արարատ	Սյունիք	ԼՂՀ
Ընդամենը	44.10	2.83	8.35	8.17	7.35	5.29	7.85	4.60	2.77	3.58	3.68	1.43
Նախկին ԱՊՀ	32.72	1.85	5.00	4.59	4.10	3.80	6.91	2.90	1.36	1.78	1.45	0.97
ՌԴ	18.69	1.47	3.95	3.91	3.37	3.11	4.75	2.44	1.12	1.44	1.23	0.84
Վրաստան	12.06	0.25	0.57	0.29	0.31	0.51	1.96	0.26	0.09	0.11	0.01	0.02
ՈՒկրանիա	1.15	0.10	0.29	0.25	0.25	0.11	0.11	0.12	0.11	0.16	0.13	0.05
Բելառուս	0.45	0.02	0.13	0.10	0.12	0.04	0.05	0.05	0.03	0.03	0.06	0.03
Ղազախստան	0.22	0.01	0.05	0.03	0.04	0.02	0.02	0.02	0.00	0.02	0.02	0.01
Այլ երկրներ	11.39	0.98	3.35	3.58	3.25	1.49	0.94	1.71	1.41	1.80	2.23	0.45
ԵՄ, որից՝	5.06	0.64	1.84	1.71	2.00	0.99	0.64	1.10	0.85	1.07	0.90	0.28
Գերմանիա	0.94	0.12	0.34	0.34	0.42	0.11	0.10	0.18	0.18	0.23	0.17	0.08
Լեհաստան	0.49	0.04	0.20	0.19	0.20	0.14	0.05	0.15	0.11	0.12	0.07	0.03
Իտալիա	0.37	0.05	0.16	0.17	0.15	0.10	0.05	0.13	0.07	0.11	0.11	0.01
Ֆրանսիա	0.39	0.06	0.18	0.16	0.17	0.10	0.09	0.10	0.07	0.09	0.11	0.05
ՄԹ	0.33	0.04	0.12	0.09	0.16	0.05	0.04	0.07	0.07	0.06	0.05	0.01
Չեխիա	0.34	0.06	0.16	0.16	0.16	0.09	0.06	0.09	0.06	0.08	0.08	0.03
Բելգիա	0.31	0.01	0.08	0.04	0.09	0.02	0.02	0.02	0.01	0.05	0.02	0.01
Ավստրիա	0.26	0.03	0.06	0.05	0.06	0.05	0.05	0.06	0.04	0.04	0.04	0.01
Իսպանիա	0.25	0.03	0.07	0.09	0.11	0.07	0.05	0.06	0.06	0.04	0.03	-

Աղյուսակ 2.
ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկների այցելությունները,%, 2020:

	Երևան	Արագածոտն	Արմավիր	Գեղարքունիք	Կոտայք	Լոռի	Շիրակ	Տավուշ	Վայոց Ձոր	Արարատ	Սյունիք
Ընդամենը	89.6	0.0	0.0	0.0	2.8	0.0	1.9	1.5	1.4	0.0	2.9
Նախկին ԱՊՀ, որից	39.8	0.00	0.00	0.01	1.23	0.00	0.83	0.65	0.61	0.00	1.27
ՌԴ	35.0	0.00	0.00	0.01	1.08	0.00	0.73	0.57	0.54	0.00	1.11
ԵՄ, որից՝	15.3	0.00	0.00	0.00	0.47	0.00	0.32	0.25	0.24	0.00	0.49
Ֆրանսիա	4.6	0.00	0.00	0.00	0.14	0.00	0.10	0.07	0.07	0.00	0.15
ԱՄՆ	5.8	0.00	0.00	0.00	0.18	0.00	0.12	0.09	0.09	0.00	0.19
Վրաստան	1.3	0.00	0.00	0.00	0.04	0.00	0.03	0.02	0.02	0.00	0.04
Իրան	6.2	0.00	0.00	0.00	0.19	0.00	0.13	0.10	0.10	0.00	0.20

ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը և հասույթները ներկայացված է աղյուսակ 3-ով:

Աղյուսակ 3.

ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը և հասույթները:

	2011		2015		2019		2020	
	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը	Հասույթ, մլն. դրամ	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը	Հասույթ, մլն. դրամ	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը	Հասույթ, մլն. դրամ	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը	Հասույթ, մլն. դրամ
ՀՀ	311	12910.3	474	22127.2	769	41794.1	847	16485.9
ք. Երևան	185	11289.1	274	18560.8	410	33772.2	480	11836.8
Արագածոտն	3	26.4	5	12.8	7	87.7	7	40
Արարատ	8	27.7	8	22.6	8	80.4	8	64.3
Արմավիր	3	35.8	4	15.9	15	41.7	16	30.1
Գեղարքունիք	4	59.2	5	131.1	39	735.9	40	341.2
Լոռի	7	73.7	17	131	30	354.6	30	204.9
Կոտայք	35	688.4	41	1437.7	91	3220	93	2001.3
Շիրակ	12	129.2	25	258.9	33	576.9	33	290.9
Սյունիք	19	236.3	32	436.2	38	830.5	38	410.7
Վայոց Ձոր	10	66.7	16	376.4	24	588	26	261.5
Տավուշ	25	277.8	47	743.8	74	1506.2	76	1004.2

Հատկանշական է, որ գործող հյուրանոցային տնտեսությունների գերակշիռ մասը գտնվում է մարզերում[1] (աղյուսակ 3), և ավելի քան 200 հյուրանոցային տնտեսություն որոշակիորեն ներգրավված է ագրոտուրիզմի ծառայություններում (գծապատկեր 2):

[1]. Գյուղատնտեսական համատարած հաշվառում:

Գծապատկեր 2. Ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսությունների քանակը, որոնք մատուցում են ագրոտուրիզմի ծառայություն:

Գծապատկերից լավ երևում է, որ տնտեսությունների մոտ 21 տոկոսը տեղաբաշխված է Արարատի մարզում՝ 97 տնտեսություն, որոնք հիմնականում ընդգրկում են 47 շրջաններ: Ընդ որում 5-ական տնտեսություն առկա է Ուրցաձորում և Գոռավանում, 4-ական՝ Վեդիում, Ոսկեթափում և Փոքր Վեդիում: Տնտեսությունների թվով երկրորդ տեղում Արմավիրի մարզն է՝ 67 տնտեսություն, որից միայն 7-ը տեղաբաշխված է Լենուղի համայնքում, 4-ական տնտեսություն՝ Եղեգնուտ, Փշատավան, Արագած համայնքներում և Վաղարշապատում: Երրորդ հորիզոնականում Գեղարքունիքի մարզն է՝ 60 տնտեսություններով, իսկ վերջին տեղում Երևան քաղաքն է:

Հայաստանում ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները, դրա ֆինանսական մատչելիությունն ու բնակչության մասնակցությունը գնահատելու նպատակով իրականացրել ենք սոցիոլոգիական հարցում, որին մասնակցել է 1568 անձ: Հարցումների սեգմենտը ներառել է հիմնականում քաղաքային համայնքների բնակչությանը, ովքեր գտնվում են 18-65 տարիքային կազմում, ընդ որում սեռային սահմանափակում չի տրվել: Թիրախային մասնակիցների ընդհանուր նկարագիրը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Հարցման մասնակիցների նկարագիրը:

	արական	%	իգական	%	ընդամենը	%
18-30	102	38.49	372	28.85	474	30.2
31-45	98	36.98	369	28.67	467	29.8
46-65	65	24.53	547	42.48	612	39.4
Նշված չի					15	0.96
Ընդամենը	265	100	1288	100	1568	100

Հատկանշական է, որ հարցմանը մասնակցողների 82 տոկոսը իգական սեռի ներկայացուցիչներն են, արական սեռի ներկայացուցիչները կամ չեն ցանկացել մասնակցել, կամ հարցաշարի կեսից հրաժարվել են շարունակել: Նշենք, որ կիսատ հարցաթերթիկները հաշվի չեն առնվել: Հարցմանը մասնակցողների 52,4 տոկոսը ապրում է Երևան քաղաքում, իսկ մնացածը մարզերից են: Ուսումնասիրության նախնական փուլում զբոսաշրջությունը դիտարկել ենք որպես մարդկության կյանքի որակի կարևորագույն բնութագիր և փորձել ենք պատահական ընտրանքի կարգով պարզաբանել զբոսաշրջության և հանգստի կարևորությունը, բնակչության ընդգրկվածությունը, դրա ֆինանսական մատչելիությունը և դրա իրականացման դեպքում բնակչության բավարարվածության աստիճանը: Դիտարկումը կազմակերպվել է հարցումների միջոցով՝ հատուկ մշակված հարցաթերթիկներով, ընդ որում դիտարկվել են զբոսաշրջության հետևյալ հիմնական տեսակները. հանգիստը ՀՀ-ում և արտասահմանում, ճանաչողական ագրոտուրիզմ, արշավներ, արկածային և էքստրեմալ տուրիզմ: Հարցաթերթիկում ներկայացված է տուրիզմի յուրաքանչյուր կատեգորիա, և հարցաթերթիկ լրացնողը եթե գտնում է, որ հանգիստը Հայաստանում և արտասահմանում կարևոր է, ապա նշում է երկու տարբերակն էլ, իսկ եթե գտնում է, որ կարևոր է միայն արտասահմանում կամ Հայաստանում, ապա նշում է դրանցից մեկը: Հարցումների արդյունքները ամփոփված ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5.

Զբոսաշրջության տեսակների կարևորությունը, ֆինանսական մատչելիությունը և իրականացման դեպքում բավարարվածությունը:

Զբոսաշրջության տեսակը	Կարևոր է, %	Ֆինանսապես մատչելի է, %	Իրականացրել է վերջին 1 տարում, %	Բավարարված է, %
1.հանգիստ Հայաստանում	95,5	52,7	75,0	78,8
2.հանգիստ արտասահմանում	78,7	30,5	28,3	90,7
3.Ճանաչողական	85,6	12,4	58,2	96,6
4. Ագրոտուրիզմ	75,4	64,6	10,8	92,0
5. Արշավներ	83,4	41,5	75,0	91,4
6. արկածային և էքստրեմալ	55,5	15,6	56,2	88,7

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ հանգիստը ՀՀ-ում կարևորում է հարցվածների ավելի քան 95,5 տոկոսը, ընդ որում ՀՀ-ում վերջին 1 տարվա ընթացքում հանգստացել է նշողների միայն 75 տոկոսը: ՀՀ-ում հանգիստը ֆինանսապես մատչելի է գնահատել հարցվողների 52,7 տոկոսը, իսկ հանգստից բավարարված են եղել նրանց 78,8 տոկոսը: Արտասահմանում հանգիստը ֆինանսապես մատչելի է գնահատել հարցվողների 30,5 տոկոսը, վերջին 1 տարում իրականացրել էր նրանց 28,3 տոկոսը և բավարարված են եղել 90,7 տոկոսը: Ագրոտուրիզմի կարևորությունը գնահատվել է 75,4 տոկոսի կողմից, և չնայած մատչելիության՝ մասնակիցների միայն 10,8 տոկոսն է վերջին 1 տարում իրականացրել: Հատկանշական է, որ ագրոտուրիզմի կարևորությունը գնահատողների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել 40 և բարձր տարիքային խմբերը, իսկ 18-40 տարիքային խմբերը նախապատվությունը տվել են արշավներին, արկածային, էքստրեմալ և ճանաչողական զբոսաշրջությանը: Հատկանշական է, որ ուղիղ կապ կա ամսական եկամուտների մեծության և զբոսաշրջության այցերի միջև (աղյուսակ 6):

Աղյուսակ 6.

ՀՀ- ում ներքին զբոսաշրջության, ագրոտուրիզմի և բնակչության կենսամակարդակի միջև փոխկապվածության ՌԿՎ արդյունքները:

Գործոնները	Ռեգրեսիոն հավասարումը	Կոռելյացիայի գործակիցը, r_{XY}	Դետերմինացիայի գործակիցը,, R^2	$F_{íç\times}$ $\alpha = 0.05$	Նշանակալիությունը
Բնակչության 1 շնչի հաշվով ամսեկան եկամուտները	$\hat{Y}_{X1} = -177616 + 19.99X_1$	0.968	0.938	75.79	Նշանակալի է
Հարցվողներից ամսեկան դրամական եկամուտները	$\hat{Y}_{X2} = 14.625 - 0.547X_1$	-0.486	0.236	57.93	Նշանակալի է

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտների մեկ դրամով ավելացման արդյունքում ներքին զբոսաշրջիկների թիվը ավելացել է 19,99 կամ մոտ 20 մարդով, և բոլոր մյուս հավասար պայմաններում զբոսարջիկների թվաքանակի վարիացիան

93,8 տոկոսով պայմանավորված է եղել բնակչության 1 շնչի հաշվով դրամական եկամուտների վարիացիայով: Իսկ հարցումների արդյունքներով պարզվեց, որ ագրոտուրիզմ նախընտրողների քանակի և նրանց ամսական եկամուտների միջև կապը հակադարձ է: Կոռելյացիայի գործակիցը -0,486 է: Բարձր եկամուտ ունեցողները ագրոտուրիզմի փոխարեն նախընտրում են հանգիստ արտասահմանում, էքստրեմալ, արկածային տուրիզմ, արշավներ և այլն:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ում կան ագրոտուրիզմին սպասարկող հյուրատնային տնտեսություններ, բայց դրանք հիմնականում միայն կեցության ծառայություններն են մատուցում և չեն ապահովում ագրոտուրիզմին բնորոշ կոլորիտն ու կոնցեպցիան: Մյուս կողմից՝ տուրիստական գործակալությունների կողմից կազմակերպվող ագրոտուրերը ներառում են միայն գինու համտես, պանրի համտես և հիմնականում ճանաչողական և գաստրո բնույթի տուրեր են: Այսօր ՀՀ գյուղական վայրեր զբոսաշրջիկների այցը ավելի շատ մշակութային տուրիզմի մաս է: Հատկանշական է, որ զբոսաշրջիկները այստեղ լուրջ ու էական գումարներ չեն ծախսում, քանի որ չկան համապատասխան ստանդարտներով ենթակառուցվածքներ, շատ քիչ գյուղերում կան գյուղական գիշերակացի, հյուրատնային համակարգ, որը զբոսաշրջիկին թույլ կտա երկար մնալ գյուղական միջավայրում և ավելի շատ գումարներ ծախսել: Այնուհանդերձ, մենք դեռ չենք իրացնում մարզերում գյուղական տուրիզմի և էկոտուրիզմի մեր հնարավորությունները: Ինչ խոսք, ագրոտուրիզմի զարգացումը շատ լուրջ սոցիալական խնդիրների լուծում կտա: Կողմնակի եկամուտի աղբյուրը գյուղացուն կպահի գյուղում: Ագրոտուրիզմը գյուղացու համար կապահովի կայուն եկամուտ, որը կախված չի լինի գյուղատնտեսությունում առկա անհաղթահարելի իրադարձություններից ու ռիսկերից: Ուսումնասիրելով գյուղական տուրիզմի ոլորտում առաջատար համարվող երկրների, մասնավորապես Հունաստանի և Գերմանիայի փորձը՝ կարելի է համոզվել, որ գյուղական տուրիզմի կազմակերպումը մեծածավալ ներդրումներ չի պահանջում: Կարծում ենք, որ սեփական հողի վրա գյուղի բնակիչները կարող են մեծ եկամուտներ ստանալ՝ սեփական տներից մի հատված որպես զբոսաշրջային տուն առանձնացնելով:

Ի տարբերություն զբոսաշրջության մյուս ձևերի՝ ագրոտուրիզմը

1. Ֆինանսապես մատչելի է և նվազ ծախսատար: Այսօրվա շուկայական գների պայմաններում ՀՀ գյուղական բնակավայրերում հանգիստը մեկ մարդ-օրվա հաշվով կազմում է 6-10 հազար դրամ, իսկ սովորական հանգս-

տյան տներում կամ հյուրատներում հանգստանալու համար 2-3 անգամ ավելի գումար է պահանջվում:

2. Ագրոտորիզմը ընտանեկան տուրիզմ է, որը լավագույն հնարավորություն է ստեղծում մասնակցելու գյուղատնտեսական աշխատանքներին և գյուղական կենցաղին:

3. Ագրոտուրիզմը մեծածավալ ներդրումներ չի պահանջում: Այդ առումով ագրոտուրիզմի զարգացումը ինքնին կարևոր ազդակ է դառնում նաև գյուղատնտեսության զարգացման համար:

4. Ագրոտուրիզմի զարգացումը նպաստում է գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում սոցիալական ենթակառուցվածքների և մշակույթի զարգացմանը:

Հատկանշական է, որ եթե տարիներ առաջ Bed and breakfast՝ անկողին և նախաճաշ հասկացությունը առհասարակ զարգացած չէր, ապա այսօր Հայաստանում ստեղծվել են ավելի քան 250 միջազգային չափանիշներին համապատասխան հյուրատներ, որոնք առավելապես զարգացած են ոչ զբոսաշրջային կենտրոններում: Գյուղաբնակները կամովին իրենց կացարանները արդիականացնում են և սպասարկում զբոսաշրջիկներին: Եվ առհասարակ, հյուրատների կառուցումն ու դրանք զբոսաշրջային այցելությունների նպատակով շահագործելը հատկապես գյուղական համայնքներում դարձել է բիզնեսի մի տեսակ: Այն զարգացնելու համար պետությունը որոշակի արտոնյալ պայմաններ է տրամադրում բոլոր այն գյուղաբնակներին, ովքեր ցանկություն են հայտնում ներգրավվել զբոսաշրջային ծառայության մատուցման ոլորտում: Այս առումով արդեն Հայաստանը ունի որոշակի ձեռքբերումներ: Ագրոտուրիզմը զարգացած է Դիլիջանում, Սևանում, Գորիսում, Տաթևում, Գյումրիում, Մեղրիում, Սիսիանում և շրջակա համայնքներում:

Հաշվի առնելով ուսումնասիրության տվյալները և հիմնվելով արտասահմանյան փորձի վրա՝ առաջարկում ենք ագրոտուրիզմի երկու մոդել.

1. Ագրոտուրիզմի զարգացում՝ հիմնված փոքր ընտանեկան բիզնեսի վրա: Զբոսաշրջիկների կացությունն կազմակերպվում է հենց գյուղացիների տներում և այստեղ զբոսաշրջիկներին հիմնականում ներառում են ֆերմերների աշխատանքում, այսինքն՝ զբոսաշրջիկները օգնում են կենցաղում, զբաղվում են կենդանիների խնամքով, կազմակերպում են զբոսախնջույքներ՝ պիկնիկներ, տարածված է նաև ձկնորսությունը և այլն:

2. Ագրոտուրիստական համալիրի ստեղծում, որը կներառի ագրոտուրիզմի զարգացմանը նպաստող բոլոր ռեսուրսները՝ հյուրատներ, էթնոմշակութային կենտրոններ, էկոլոգիական և էսթետիկական տեսակետից բարենպաստ պայմաններ և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Լ., Գյուղական զբոսաշրջություն, ուսումնական ձեռնարկ, Եր., 2015:

2. Статистика туристического рынка, 2019. https://www.mitt.ru/Stati/-statistika 2019.

OPPORTUNITIES FOR THE DEVELOPMENT OF AGRO-TOURISM IN ARMENIA

VARTANYAN NINA
ANAU Lecturer
e-mail: ninavardanyan@mail.ru
KHACHATRYAN HAKOB
PhD in Economics, Associate Professor
ANAU, GSU Lecturer
e-mail: hkhachatr@mail.ru

Agritourism is where agriculture and tourism meet to provide you with an amazing educational experience, whether it be a tour of a farm or ranch, a festival or cheese-making class. Farmers and wineries turn their land into a destination and open their doors to the public in order to teach more about what they do. It is regarded as a valuable method for diversification of economic practices in the countryside and rural entrepreneurship, helping to preserve the cultural landscapes and contributing in the new model for Armenian farming activities. So agritourism has a big significance for economic development in rural areas without putting much pressure on natural resources or social and community values, thus allowing locals and visitors to interact positively and share common created experiences.

The purpose of the study is to clarify the possibilities for the development of agritourism in Armenia. Based on research data and based on foreign experience, we propose two models that require less capital investment. According to the first model, accommodation of tourists is organized in the houses of rural residents,

where tourists participate in agricultural work. In another case, it is proposed to create an agro-tourism complex, which will include all the resources that contribute to the development of agro-tourism: guest houses, ethno-cultural centers, environmentally and aesthetically favorable conditions, etc. Thus, the development of rural tourism will lead to a balanced development of the regions, the rural resident will have additional income, unemployment will decrease, and the social infrastructure of the village will develop.

Keywords: *Agritourism, product manufacturing, Tourists, rural settlement, fishing, harvesting, horseback riding, daily life of the village.*

ВОЗМОЖНОСТИ ДЛЯ РАЗВИТИЯ АГРОТУРИЗМА В АРМЕНИИ

ВАРТАНЯН НИНА
Преподаватель ANAY
электронная почта: ninavardanyan@mail.ru
ХАЧАТРЯН АКОБ
Кандидат экономических наук, доцент
Преподаватель АНАУ, ГГУ
электронная почта: hkhachatr@mail.ru

Агротуризм - это место, где «встречаются» сельское хозяйство и туризм, чтобы предоставить вам удивительный образовательный опыт в виде фермерских туров, фестивалей или мастер-классов по изготовлению сыра. Он считается ценным методом диверсификации экономической практики в сельской местности и сельского предпринимательства, способствующая сохранению культурных ландшафтов и формированию новой модели сельскохозяйственной деятельности в Армении. Агротуризм имеет большое значение для экономического развития сельских районов, не оказывая большого давления на природные ресурсы или социальные и общественные ценности, позволяет местным жителям и посетителям позитивно взаимодействовать и делиться общим созданным опытом.

Цель исследования –выяснить возможности развития агротуризма в Армении. На основе данных исследований и основываясь на зарубежном опыте, мы предлагаем две модели, требующие меньших капиталовложений. По первой модели размещение туристов организуется в домах сельских жителей, где туристы участвуют в сельскохозяйственных работах. В другом случае предла-

гается создание агротуристического комплекса, в который войдут все ресурсы, способствующие развитию агротуризма: гостевые дома, этнокультурные центры, экологически-эстетически благоприятные условия и т.д. Таким образом, развитие сельского туризма приведет к сбалансированному развитию регионов, у сельского жителя появится дополнительный доход, снизится безработица, будет развиваться социальная инфраструктура села.

Ключевые слова: *агротуризм, производство продуктов, туристы, сельское поселение, рыбалка, сбор урожая, верховая езда, повседневная жизнь села.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 02.03.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 09.03.2022թ.: